

**Աստվածաշնչյան լեզվաշերտերը Ջ. Գ. Բայրոնի  
«Մանֆրեդ» դրամատիկական պոեմում և դրանց  
հայերեն թարգմանությունը**

*Հորվածում քննվում են Հովհ. Մասեհյանի թարգմանության գուգադրմամբ՝ անգլիացի մեծ բանաստեղծ Ջ. Գ. Բայրոնի «Մանֆրեդ» դրամատիկական պոեմի աստվածաշնչյան լեզվաշերտերի վերաբերյալ որոշ հարցեր: Նշվում է, որ «Մանֆրեդի» (ընդհանրապես, Բայրոնի ստեղծագործության) անքակտելի մասը կազմող աստվածաշնչյան հասկացությունները և դրանց բանաստեղծական փոխակերպումները Բայրոնի ինքնագիտակցման, գաղափարագեղագիտական հայեցակերպի և, ընդհանրապես, աշխարհընկալման կարևորագույն միջոցներ են, որոնք համատեքստով պայմանավորված՝ հաճախ օժտվում են հուզարտահայտչական առնշանակությամբ:*

**Բանալի բառեր.** լեզվաշերտ, միֆոլոգեմային, սակրալ-արքետիպային, լեզվաբանաստեղծական, լեզվաոճական, համատեքստ, առնշանակություն, մտազուգորդում, փոխակերպում, այյուզիա:

Անգլիացի մեծ բանաստեղծ Ջ. Գ. Բայրոնի ստեղծագործությունների շարքում իր թեմատիկ-բովանդակային ընդգրկմամբ և լեզվառճական ու լեզվարտահայտչական միջոցների բազմազանությամբ իր ուրույն տեղն ունի «Մանֆրեդ» դրամատիկական պոեմը<sup>1</sup> (հայ. թրգմ.՝ Հովհ. Մասեհյան):

Սույն հոդվածում քննվում են «Մանֆրեդի» աստվածաշնչյան հարուստ լեզվաշերտերն արտացոլող մի քանի օրինակ միայն՝ լեզվաբանաստեղծական վերլուծության և գուգադրական ոճաբանության դիրքերից փորձելով վերհանել ու բնորոշել Բայրոնյան պոեզիային հատուկ աստվածաշնչյան լեզվաշերտերը և գուգադրելով հայերեն թարգմանության հետ՝ ընդգծել դրանց մերձակցությունը կամ հեռացումը իրենց սկզբնաղբյուր-արքետիպերից: Այսպես, օրինակ՝ “The Giant steed, to be bestrode by Death /As told in the Apocalypse...” (Act 2, scene 2) – «Հսկա նժույզի, որի վրա մահը պիտի արշավե, /ինչպես ասված է Հայտնության Գրքում...» (Արար 2, տեսարան 2):

Այստեղ, անկասկած, արքետիպային են «նժույզը» (ունի սրբազան նժույզի հատկանիշներ. նախ՝ «հսկա» է, ապա՝ իր վրա որպես հեծյալ կրում է «մահը») և «մահը»՝ նստած ձիու վրա: Սա, փաստորեն, այլուզիա է Նոր Կտակարանից («Եւ երբ բացեց չորրորդ կնիքը, չորրորդ կենդանուց լսեցի մի ձայն, որ ասում էր՝ գալիս եմ: Եւ տեսայ ահա դեղնաւուն մի ձի. Եւ ով նստել էր նրա վրայ, ունէր Մահը. Եւ Դժոխքը գնում էր նրա յետեւից...», Հայտն. 6:7-8):

“...but in the war / Of elements the waters shrunk from me...” (Act 2, scene 2) – «Սակայն տարերքի հակամարտի մեջ / Ջրերն առջևս խորշել են, փախել...» (Արար 2, տեսարան 2): Ջրերը<sup>2</sup> և նրանց «փախչելը» հիշեցնում են իսրայելացիների անցումը Կարմիր ծովով և Հորդանան գետով: Բանաստղը հիշեցնում է նաև 113-րդ սաղմոսի հետևյալ հատվածը. «Ի՞նչ եղաւ քեզ, ծով, ո՞ւմ տեսար ու փախար, / կամ դո՛ւ, գե՛տ Յորդանանի, ինչո՞ւ ետ դարձար»:

Բերենք այլ օրինակներ Բայրոնի «Մանֆրեդի» նշյալ հատվածից.

“Pity, and smiles, and tears – which I had not;  
And tenderness – but that I had for her;”

«Գուրթ, ժպիտ, արցունք, որ ես չունեի,  
Փափուկ սիրտ, բայց այդ ես էլ ունեի...»

Հովհ. Մասեհյանն իրեն հատուկ նուրբ լեզվազգացողությամբ, բնագրի “tenderness” գոյականը թարգմանել է, մեր կարծիքով, շատ ճշգրիտ՝ «փափուկ սիրտ» մակդրավոր կապակցությամբ՝ հարազատ մնալով անգլերեն Աստվածաշնչի (‘Authorised King James Ver-sion’) “tender heart” կապակցությանը: Այստեղ «փափուկ» ածականական մակդիրը «սիրտ» միֆոլոգեմի հետ, հիշեցնում է աստվածաշնչյան հետևյալ արքետիպը. «Քո լսած խոսքերի իմաստը այս է. քանի որ քո սիրտը փափկեց, դու խոնարհ գտնուեցիր Տիրոջ առջև...» (Դ. թագ. 22:19, ընդգծումը մերն է՝ Ե. Վ.): «Սիրտը», որ առանցքային միֆոլոգեմ է թե՛ հունահռոմեական առասպելաբանությունում և թե՛ Աստվածաշնչում, Բայրոնի պոեզիայում հանդես է գալիս բանաստեղծական

առանձնահատուկ հուզականությամբ ու աստվածաշնչյան իմաստավորմամբ: Այն հանդիպում է նաև «Մանֆրեդի» հենց հաջորդ բանատողում. “It gazed on mine, and wither’d” – «Սիրտը իմ սրտին նայեց ու թռչնեց», որտեղ «սրտին նայեց»-ը փոխաբերություն է՝ կազմված «սրտի» անձնավորումով:

“Loathing our life, and dreading still to die. / In all the days of this detested yoke” – «Եվ մի-անգամայն մահից վախենալով/Այս դաժան լուծի օրերի թվում»: Այստեղ արքեստիպային բառը լուծն է, որն այս համատեքստում իմաստային առումով ուղղված է ոչ թե դեպի առասպելը կամ կրոնական տեքստերը, այլ բուն բնակալական ժամանակաշրջանը: «Դաժան» և «լուծ» բառերի զուգորդումը փոխաբերական իմաստ է հաղորդում «դաժան» ածականին՝ վերստին հաստատելով այն միտքը, որ միայն բառային զուգորդումների մեջ է երևան գալիս բառն իր ողջ իմաստային հնարավորություններով և այդ իմաստային սահմանների ընդլայնման ունակությամբ:

“Beneath his footsteps the volcanoes rise;  
His shadow is the Pestilence; his path  
The comets herald through the crackling skies:  
And planets turn to ashes at his wrath”.

(Act 2, scene 4)

«Հրաբուխ է ցայտում նրա քայլերից.  
Ժանտախտ է ծագում նրա սովերից.  
Երբ նա անցնում է, գիսավորները ծանուցանում են,

Իբրև մունետիկ ամբողջ երկինքը ճարճատեցնում են.

Մոլորակները նրա ցասումից մոխիր են դառնում,...»:  
(Աբար 2, տեսարան 4)

Այստեղ առաջին իսկ հայացքից նշմարվում են հայտնութենական պատկերները (ընդ որում, դրանց արքետիպերը առկա են հենց Հայտնությանը նախորդող տեքստերում՝ սաղ-մոսներում, մարգարեություններում, Ավետարաններում և առաքելական որոշ թղթերում): Որպես բայրոնյան պատկերների արքետիպ, կարելի է նշել հետևյալները. «Եւ նշաններ պիտի լինեն արեգակի, լուսսի եւ աստղերի վրայ...» (Ղուկ. 21:25), «...երկնքի զօրութիւնները պիտի շարժուեն» (Ղուկ. 21:26), «Եւ աստղերը երկնքից վայր պիտի թափուեն...» (Մարկ.13:25), «...երկինքը պիտի անցնի, չքանայ շառաչինով...» (Պետր. 3:10): Կարելի է մեջ բերել աստվածաշնչյան այլ հատվածներ, ևս՝ ցույց տալու, որ բանաստեղծի լեզվա-մտածողության հեռավոր խորքերում առկայծում են աստվածաշնչյան արքետիպեր, որոնք աշխարհագացման բայրոնյան մթնոլորտում հանդես են գալիս բանաստեղծական-փիլիսոփայական նոր ձևերով: Այդուհանդերձ, «Մանֆրեդի» այս հատվածում մեզ առավելապես հետաքրքրում է (Մասեհյանի փայլուն թարգմանությամբ) «իբրև մունետիկ» մակբայական մակդիրը, որը ցույց է տալիս, թե ինչպես են գիսավորները «ճարճատեցնում» երկինքը. «իբրև մունետիկ»-ը, կարծում ենք, աստվածաշնչյան միֆոլոգեմ-մակդիր է. բայց եթե Աստվածաշնչում այդ մունետիկ-հրեշտակը «յաւիտենական աւետիս» է տալիս ազգերին («Եւ տեսայ երկնքի մեջ թոչող մի ուրիշ հրեշտակ, որ

յաւիտենական աւետիս ունէր քարոզելու երկրի վրա բոլոր ազգերին եւ լեզուներին», Հայտն. 14:6), ապա «Մանֆրեդում» ոգիները, պանծացնելով սատանային՝ «օղի ու երկրի իշխանին», գիսավոր աստղերին՝ մունետիկներին, վերագրում են չարիքներ ու սարսափելի գույժեր հաղորդելու գորություն.

“Prostrate thyself, and thy condemned clay, / Child of the Earth! Or dread the worst.”

«Գետին նետիր քեզ և այդ անիծյալ հողէ մարմինդ / Դու, Երկրի Զավակ, և կամ վախեցիր ամենավատից»:

Մարմնին տրված «անիծյալ հողէ» մակդիրը, անշուշտ, աստվածաշնչյան այլուզիա է («Տէր Աստուած մարդուն ստեղծեց երկրի հողից...», Ծննդ. 2:7, «...հող էիր եւ հող էլ կը դառնաս», Ծննդ. 3:19, ընդգծումը մերն է՝ Ե. Վ.): «Անիծյալ հողէ» մակդրավորումը ցույց է տալիս, որ մարմինը (=մարդը) իր մեջ զուգակցում է երկու հասկանիշ՝ «անիծված»-ը (Արարչի կողմից) և «հողէ»-ն (դարձյալ տրված Արարչի կողմից): Ուշարժան է, որ թարգմանիչը դրանք միմյանցից ստորակետով չի անջատել՝ հատուկ շեշտելու համար նրանց միասնականությունը, դրանով իսկ արտածելով բանաստեղծի բուն ասելիքը՝ *անիծյալ է, որ հող է, կամ եթէ հող է, ուրեմն՝ անիծյալ է*: «Անիծյալ»-ի և «հողէ»-ի զուգակցումը մարդու էությունը բնութագրող եզակի մակդրավորում է հայերենում: Ի դեպ, «հողէ» մակդիրը Բայբոնը կիրառել է նույն տեսարանի այլ հատվածում, ևս. “...of the mould of thy clay...” – «Քո հողէ պատյանով...», որտեղ մարմնի փոխարեն այս անգամ ունենք «պատյան» բա-

որ: Մա կրկին հաստատում է այն իրողությունը, որ Բայրոնի պոեզիայում (մասնավորապես «Մանֆրեդում») կան արքետիպային բնույթի մակդիրներ, որոնք բանաստեղծի մտահղացմամբ տվյալ արքետիպը առավել կամ պակաս ցայտուն են արտացոլում: Նկատի ունենք, որ ինչպես «Մանֆրեդում», այնպես էլ Բայրոնի մյուս գործերում մակդիրները, իրենց այլաբանական-փոխաբերական իմաստավորումից զատ, մեր կարծիքով, ունեն նաև որոշակի արքետիպային անցյալ կամ ավանդույթ: Այսպես, նույն տեսարանում հանդիպում ենք հետևյալ մակդրավոր կապակցությունները. “But now I see it is no living hue / But a strange hectic – like the unnatural red / Which Autumn plants upon the perishd leaf”.– «Բայց ոչ, տեսնում եմ կենդանի գույն չէ./Այլ տարօրինակ թույրն է ջերմախտի,/Այն անբնական կարմրության նման,/Որով աշունը գունավորում է մեռած տերևը» (ընդգծումը մերն է՝ Ե. Վ.): Թեև «կենդանի գույն» և «մեռած» տերև» մակդրավոր կապակցություններն ունեն որոշակի այլաբանական իմաստ, սակայն անհնար է այս համատեքստում «գույն» և «տերև» հասարակ գոյականներով արտահայտված մակդրակիրներին վերագրել միֆոլոգեմային որևէ հատկանիշ (նրանք հանդես են գալիս իրենց բառարանային-անվանողական իմաստով, այլ ոչ թե որպես որևէ առնչանակությամբ օժտված սակրալ-արքետիպային բառեր): Գուցե դիցաբանական կամ կրոնական այս կամ այն համակարգում դրանք ունեցել են (կամ դեռևս ունեն) միֆոլոգեմային նշանակություն և արժեք, սակայն «Մանֆրեդի» այս հատվածում ամենևին էլ միֆոլոգեմներ չեն<sup>3</sup>:

Այսպիսով, բառի *միֆոլոգեմային* բնույթը դրսևորվում է միայն որոշակի **համատեքստում**, կամ, ավելի ճիշտ՝ այն պայմանավորված է խիստ *որոշակի համատեքստով* և դրան համապատասխան մտազուգորդումներով: Այս առումով, թերևս, շատ կարևոր ու արդիական է այն միտքը, որ *տվյալ լեզվակառույցում՝ կախված լեզվամտածողական յուրահատկություններից և որոշակի մտազուգորդումներից, ինչպես նաև համատեքստային ուղղվածությունից, բառերը կարող են վերադառնալ իրենց առասպելա-կան-միֆոլոգեմային իմաստներին ու գործառույթներին*: Իմաստային-գործառութային նման «վերադարձի» բազմաթիվ օրինակներ կարելի է բերել Բայրոնի «Մանֆրեդից»՝ միֆոլոգեմային «լիցքավորում» ունեցող բառերը և դրանց վերաբերող մակդիրները քննելիս: Այսպես, օրինակ՝

“... made the caves/ Acquainted with thy vainly echoed name.” (Act 2, scene 4)

«Այրերը ցնցել զուր արձագանքված քո քաղցր անունով»:

(Արար 2, տեսարան 4)

Անունը հնում համարվում էր *նվիրական* ու *սուրբ*. դրա համար էլ հաճախ փոխում էին մարդու անունը կամ տալիս նորը՝ հինը թաքցնելու կամ նրանից ազատվելու համար, իսկ եթե անունը կրողի համար ուներ սակրալ նշանակություն, ապա անհրաժեշտ էր դառնում այն գաղտնիացնել, որի համար ընտրում էին նոր անուն կամ նույնիսկ անուններ: Սակայն եթե հին անունը որոշ հանգամանքների բերումով զրկվում էր իր սակրալ նշանակությունից կամ ենթարկվում չար ազդեցությունների (օրինակ՝



անեծքի կամ կախարհանքի), ապա դրանից պաշտպանվելու համար անձն ընդունում էր նոր անուն: Անվան հետ կապված բազմաթիվ ուշագրավ պատմություններ կան, բայց սահմանափակվենք Աստվածաշնչի հետևյալ տողերով. «Մանովեն ասաց Տիրոջ հրեշտակին. «Ի՞նչ է քո անունը, ասա՛...»: Տիրոջ հրեշտակն ասաց նրան. «Ինչո՞ւ ես հարցնում իմ անունը, դա մի սքանչելի անուն է» (Դատ.13:17-18), «...պիտի օրհնեմ քեզ, պիտի փառավորեմ քո անունը» (Ծննդ. 12:2), «Քո անունը թափուած իւղ է անուշ» (Երգ երգոց 1:2), «Քո անուան համար ինձ առաջնորդ եղար...» (Մաղմ. 30:4), «Հա՛յր մեր, որ երկնքում ես. սո՛ւրբ թող լինի քո անունը...» (Մատթ. 6:9), «...եւ նրա վրայ պիտի գրեմ իմ Աստծու անունը եւ իմ Աստծու քա-ղաքի անունը, Նոր Երուսաղէմի, որ իջնելու է երկնքից, իմ Աստծուց, եւ նրա անունը նոր է» (Հայտն. 3:12) և այլն (ընդգծումները մերն են՝ Ե.Վ.): Աստվածաշնչում բազմաթիվ են անվան հետ կապված ասույթները, սակայն բայրոնյան «քաղցր անունով» մակդրավոր կապակցությունը, կարծում ենք, սերում է, հետևյալ արքետիպից. «Օրհնեցէ՛ք Տիրոջը, քանզի բարի է Տէրը. սաղմո՛ւ երգեցէ՛ք նրա անուանը, քանզի քաղցր է նա» (Մաղմ. 134:3): Ուշագրավ է, որ Մասեիյանը բնագրային “echoed name” (բառացի՝ «արձագանքված անուն») մակդրավոր կապակցությունը թարգմանել է (մեր կարծիքով, շատ ճիշտ և դիպուկ) աստվածաշնչյան «քաղցր անուն» բառակապակցությամբ, թէև բնագրում «քաղցր» բառը բացակայում է:

Հաջորդ բանատողում՝ “I have outwatch’d the stars...”– «Աստղերից ավել հսկել եմ անքուն», աստղերը Աստվածաշնչում մատնանշում են տիեզերական փոփոխություններ, ինչ-պես նաև խորհրդանշում են ազգեր կամ ժողովուրդներ: Օրինակները շատ են (տե՛ս Հոբ 38:31-33, Ծննդ.1:14-19, Թվոց 24:17, Դանիել 12:3, Հայտն. 2:28 և այլն): Սակայն, ամենա-ուշագրավը, թերևս, մոզերի երկրպագությունն է *աստղի* առաջնորդությամբ. «...քանզի մենք տեսանք Նրա աստղը արևելքում...» (Մատթ.2:2): Այստեղ, ակներևաբար, *աստղի* հատուկ գործառույթը ժամանակ ցույց տալն է (մանուկ Հիսուսի ծննդյան ժամանակը), այսինքն՝ աստղերի «հսկիչ» լինելը և ժամանակ ցույց տալը գրեթե նույնանում են: Բայրոնյան տեքստում *աստղերը* միանալով չափ արտահայտող «ավել» կապական բառի հետ, հանդես է գալիս որպես «հսկել եմ» դիմավոր բայի մակդիր: Հատկանշական է, որ պոեմի 3-րդ արարի, 2-րդ տեսարանում Մանֆրեդը խոսելով «ամենահին հրամանակատար Ամենակալի», «քաղղեացի հովիվների սիրտը հրճվեցնողի» մասին, նրան բնորոշում է ոչ միայն որպես «Աստված նյութեղեն, ներկայացուցիչ Աներևութի», այլև որպես «Աստղ գերագույն, կենտրոն բազմաթիվ այնքան աստղերի» (բնագրում՝ “Thou material God!”, “Thou chief star!”, “Centre of many stars!):

Ավարտելով հոդվածը նշենք, որ Ջ. Գ. Բայրոնի «Մանֆրեդ» դրամատիկական պոեմի անքակտելի մասը կազմող (ընդհանրապես, Բայրոնի ողջ ստեղծագործությա- նը բնորոշ) աստվածաշնչյան լեզվաշերտերը և նրանց բա-

նաստեղծական փոխակերպումները հանդես են գալիս որպես նրա ինքնագիտակցման, գաղափարագեղագիտական հայեցակերպի և, ընդհանրապես, աշխարհընկալման կարևորագույն միջոցներ, որոնք համատեքստով պայմանավորված՝ հաճախ ձեռք են բերում նորանոր իմաստային և հուզարտահայտչական նրբերանգներ:

### **Ծանոթագրություններ**

1. «Մանֆրեդ» չափածո դրաման կամ դրամատիկական պոեմը (A Dramatic Poem), Բայրոնը գրել է 1816-1817թթ. (առաջին և երկրորդ արարները՝ Շվեյցարիայում, երրորդ արարը՝ Վենետիկում):

Հայ թարգմանչական արվեստի դասական Հովհ.Մասեհյանը, Ջ. Գ. Բայրոնի բազմաթիվ գործերից թարգմանել է միայն «Մանֆրեդ» դրամատիկական պոեմը: Շեքսպիրի դրամաների հայտնի թարգմանչին Բայրոնի «Մանֆրեդը», թերևս, գրավել է իր հիրավի շեքսպիրյան ոգով ու շնչով, բանաստեղծական հզոր պաթոսով և լեզվառճական կատարելությամբ: Մասեհյանը «Մանֆրեդը» թարգմանել է դեռևս 1922-ին՝ Վիեննայում: Այս առումով, այն որոշակիորեն հնացել է. կան որոշ գրաբարյան ձևեր, քերականական ու լեզվառճական վիճելի կետեր և այլն: Այդուհանդերձ, շնորհիվ իր բացառիկ, անուրանալի տաղանդի, նուրբ լեզվազգացողության ու բարձր պրոֆեսիոնալիզմի, անվանի թարգմանչին հաջողվել է պահպանել բայրոնյան ստեղծագործության շունչն ու ոգին և հայ ընթերցողին հաղորդել «Մանֆրեդի» ողջ ուժն ու հմայքը: Այս թարգմանությունը, մեր համոզմամբ, Ջ. Գ. Բայրոնի ստեղծագործությունների հայերեն թարգմանություններ-

րի շարքում (նկատի ունենք մեծ կտավի գործերը), արդարև, լավագույնն է:

2. Նախևառաջ, *ջրերի փախչելը* կամ *ջուրն* ինքը՝ երկուսն էլ առասպելական են: Հիշենք, թեկուզ, *ջրերին* վերաբերող առասպելական սյուժեները. Թեդ(տ)իս աստվածուհին իր որդուն անխոցելի դարձնելու համար, նրան թաթախում է Ստիգս (Ստիքս) գետի *ջրերի* մեջ «Դիցաբանական բառարան», 1985: 43): Հայոց «Մասնա ծոեր» էպոսում Ծովինարը խմում է հղիացնելու գորություն ունեցող ջրից և ունենում Մանասարին ու Բաղդասարին, իսկ Դավիթը՝ խմելով Կաթնաղբյուրից, էլ ավելի է դյուցագնանում («Մասնա Ծոեր», 1977:386): Ջրի (սուրբ կամ գորավոր) մասին խոսվում է նաև *Աստվածաշնչում*. «...այս ջուրը...լինելու է բուժիչ» (Եզեկ. 47:9), «Եվ Տիրոջ հրեշտակը ժամանակ առ ժամանակ իջնում էր աւազանը եւ ջրերը խառնում. Եւ ով ջրերի խառնելու ժամանակ առաջինն էր իջնում, բժշկուում էր...» (Հովհ. 5:4), «...պիտի առաջնորդի նրանց դեպի կեանքի աղբիւրը կենդանի ջրի...» (Հայտն. 7:17) և այլն (ընգծումները մերն են՝ Ե.Վ.):

3. Այդուհանդերձ, նույն գոյականը՝ օրինակ, *տերև*, մի այլ *համատեքստում* (դիցուք, նորկտակարանյան), ակներևաբար, *միֆոլոգեմ* է, քանզի սակրալ-արքետիպային բնույթ ունի՝ ընդգծված առնշանակությամբ: Այսպես, աստվածաշնչյան հետևյալ հատվածում. «գետի եզերքին, մէկ եւ միւս կողմում, կար կենաց ծառ, որ տասներկու անգամ պտուղ էր տալիս. ամէն ամիս՝ իր պտուղը. Եւ ծառի տերեւը ազգերի բուժման համար էր» (Հայտն. 22:2), «...Ու նրա տերեւը պիտի չթափի...» (Մաղմ. 1:3) և այլն (ընդգծումը մերն է՝ Ե. Վ.), տերևը, անշուշտ, միֆոլոգեմ է (այն ունի սակրալ բնույթ, քանի որ վերաբերում է «կենաց ծառին»): Որպես միֆոլոգեմ, «տերևը» հանդիպում է նաև բանահյուսական

որոշ երկերում, ժողովրդական ողբերում և դրանց հեղինակային մշակումներում՝ օրինակ, Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմի Սարոյի մոր ողբի տեսարանում.

«Կարմիր արևից ընկած, Սարո ջա՛ն,  
Կանանչ տերևից ընկած, Սարո ջա՛ն...»

(Թումանյան Հովհ., 1969:97)

Ուշագրավ են Դանթ(տ)եի «Աստվածային կատակերգություն» պոեմի «Քավարանի» վերջին՝ 142-145-րդ տողերը, որոնք սերում են աստվածաշնչյան վերոհիշյալ (Հայտն. 22:2) բուժիչ տերևների և ջրի պատկերից.

«Ես ետ դարձա այն ջրերից մաքրասուրբ,  
Վերածնված՝ բույսի պես նոր փթթած դեռ  
Եվ ծածկված տերևներով նոր ու նուրբ,  
Ջինջ ու պատրաստ բարձրանալու դեպ աստղեր»:

(Դանտե, 1983:334)

### Գրականության ցանկ

1. *Աստուածաշունչ, Մատենան Հին ԵԻ Նոր Կտակարաններ* (2004)ի, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին ԵԻ Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն
2. Բայրոն Ջ. Գ. (1965), *Երկերի ժողովածու*, Ե., «Հայաստան»
3. Բոտվիննիկ Մ. Ն., Կոզան Մ. Ա., Ռաբինովիչ Մ. Բ., Սելեցկի Բ. Պ. (1985), *Դիցաբանական բառարան*, Ե., «Լույս»
4. Դանտե Ալիգիերի (1983), *Աստվածային կատակերգություն*, Ե., «ԵՊՀ»
5. Թումանյան Հովհ. (1969), *Երկերի ժողովածու*, հ. 1-4, հ.1, Ե., «Հայաստան»

6. *Մասնա ճեղք* (1977), Ե., «Սովետական գրող»
7. Lord Byron (2005), *Selected Poems*, Penguin Books
8. *The Complete Works of Lord Byron In One Volume* (1835), Paris, Baudry
9. *The Holy Bible*, Authorized King James Version (1989), N. Y.

Երվանդ Երվանյան

ԵԴՄ

**Библейские языковые пласты в драматической поэме  
«Манфред» и их армянский перевод**

*В статье рассматриваются некоторые вопросы относительно библейских языковых пластов в драматической поэме «Манфред» великого английского поэта Дж. Г. Байрона в сопоставлении с их армянским переводом. Отмечается, что составляющие неотъемлемую часть «Манфреда» сакрально-архетипные понятия библейского происхождения являются важнейшим средством самовыражения, и вообще, мировоззрения поэта.*

*Ключевые слова: языковой пласт, мифологемный, сакрально-архетипный, лингвопоэтический, ассоциация, лингвостилистический, контекст, коннотация, аллюзия, трансформация.*

**Biblical Language Layers in Lord Byron's Dramatic  
Poem "Manfred" and Their Armenian Translation**

*The article deals with some problems concerning the biblical language layers in Lord Byron's dramatic poem "Manfred" and their Armenian translation by Hovh. Masehyan. It is stated that as an integral part in Lord Byron's poetry in general, biblical (sacral-archetypal) language layers as well as their poetic transformations, due to their context are important means of the poet's expressing his own self-consciousness and, generally, world perception.*

*Key words: language layer, mythologemic, sacral-archetypal, linguopoetic, linguostylistic, context, connotation, association, transformation, allusion.*